ԱԶԳԱՅԻՆ

ՆՈՐ ՏԱՐԻ.

Տարեմուտի երեկոյեան 7-րդ ժամին Մայր Աթոռոյս միաբանութիւնը ընթրիքից յետոյ գնաց Վեհարան և խմբուեց Զմեռնային դահլիճում, ուր պատրաստուած էր կաղանդի սեղանը. Վեհափառ Հայրապետը ուղեկցութեամբ Գեր. Տ. Մկրտիչ Սրբազան Արքեպիսկոպոսի մտաւ դահլիճ և յատկացեալ տեղը կանգնելով՝ ողջունեց միաբանութեանս և ապա օրհնեց սեղանը. սեղանի ճակատին գահաւորակի վերայ բազմեց Նորին Վեհափառութիւնը, սեղանի շուրջը, յաջմէ և յահեկէ Վեհափառ Հայրապետի՝ տեղի կալան միաբանք։

Վեհափառ Հայրապետը շնորհաւորելով նոր տարին, որքան յիշումենք ասաց.

«Սիրելի եղբարք,

«Ի մէջ ուրախութեան և տրտմութեան վարանեալ՝ շնորհաւորեմ զտարեմուտս այս։ Ի մէջ ուրախութեան, որովհետև գոհութիւն Աստուծոյ եկեղեցական ինչ ինչ կենճռալից գործեր յաջողութեամբ վերջացան. ի մէջ տխրութեան, վասն զի դպրոցական գործը, որի համար Տփխիսում շատ աշխատեցի, և յոյս ունէի գէթ այս երեկոյ աւետեաց լուր հաղորդել, այս բաղդաւորութեան դեռ չարժանացայ։ Բայց այս տխրութիւնը յուսանք յԱստուած, որ յուրախութիւն փոխուի, որովհետև Սողոմն իմաստասէրն կասէ. «Ամենայն իրաց վախճանն է գովելի». իսկ Էմմանուէլ Թեսաւրոս գրեթէ Սողոմի խօսքը կրկնելով կասէ. «Զտիւն՝ երեկոյն, և զգործն՝ վախճանն առնէ գովելի»։

Հաւատք և յոյս ունենանք առ Աստուած և ջերմ հպատակութիւն առ Օգոստափառ Կայսրն, և մեր փափագանաց լրումն կը տեսնենք։ Աղօթենք առ Աստուած, որոյ ի ձեռին են սիրտք թագաւորաց, տալ Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր Կայսերն երկար կեանք և հայրական գութ առ ազգս Հայոց, մեր տրտմեալ սրտերն ուրախացնելու՝ բանալով մեր փակեալ հոգեւոր դպրոցներն։ դռները առաջի մանկանց սուրբ եկեղեցւոյն, որոյ մէջ

մշտամռունչ աղօթք են բարձրանում առ երկնաւոր թագաւորն, և գոհութիւն՝ վասն ամենայն իրաց, զոր յանցեալն վայելած ենք և պիտի վայելենք յապագայիս »։

Երգեցիկք եղանակեցին. « Երկինք և երկիր գոհանան զքէն Տէր » օրհներգը։ Միաբաններից մինը գրաւոր ճառ կարդաց. յետոյ երգիչք երգեցին « Ով Տէր Աստուած, լուր մեր բարբառ » երգը։ Գեր. Մկրտիչ Սրբազան Արքեպիսկոպոս Բաբամեան յոտին կանգնելով ասաց.

« Հոգևոր Տէր,

Ցօրէ գալստեան Ձերոյ ցայսօր միաբան եղբարքք վայելեալ եմք ի շնորհս Ձեր առաւել քան զարժանին մեր հայրական գթոյդ արժանացեալ գերազանց բարեսրտութեամբ Ձերով. ի շնորհաց Ձերոց պարտաւորեալ երաշխաւորեմ թէ Միաբանութիւն Մայր Աթոռոյս բաց յերախտագիտութենէ առ Վեհափառութիւն Ձեր, չխորհի զայլ ինչ, բայց միայն աղօթել զի Աստուած տացէ Ձեզ կեանս երկայնս և խաղաղականս, զկատարումն ըղձից Ձերոց տալով տեսանել Ձեզ և Միաբանութեանս, ի փառս Հայ ազգի, ի սփոփանս Ձեր և ի մխիթարութիւն Միաբանութեանս։ Կեցջիք բարգաւաճեալ յաջողութեամբ գործոցդ, բարօրութեամբ կենացդ և որդիական ջերմեռանդն հնազանդութեամբ Միաբանութեանս առ Վեհափառութիւն Ձեր »։

Երգեցիկները երգեցին յանուն Նորին Վեհափառութեան յօրինուած երգը և յաւարտ՝ Գերապատիւ Սերովբէ Եպիսկոպոս յոտին կանգնած՝ ասաց.

« Վեհափառ Տէր,

Աստուած, որ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Աթոռը Ձեր Վեհափառութեան վիճակեցրեց, տայ Ձեզ առողջութիւն և կեանք, որ երկար տարիներ վայելէք Հայրապետական իշխանութիւնն իբրև որդեսէր հայր՝ վայելելով նաև Միաբանութեանս հայրասէր զգացման հաւատիքը առ Վեհափառութիւն Ձեր. Միաբանութեանս՝ որ պատրաստ է Ձեր բոլոր ակնարկութեանց հնազանդել խոնարհաբար. ուրեմն՝ օրհնեցէք, Վեհափառ Տէր, որ Մայր Աթոռոյս Միաբանութիւնը արժանի իւր կոչմանը և Ձեր հայրական գթոյն համբաւ և հանարումն ունենայ գործով և արդեամբք, ի պայծառութիւն եկեղեցւոյ և ի շահ ազգի »։

Երգեցիկները երգեցին Քառասուն մանկանց Մանկունքը. «Թագաւոր երկնաւոր»։

Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց օրհնել և խրախուսել Միաբանութեանս՝ ասելով

«Ես երկուց Արքազանից սրտագին արտայայտութիւնքը ընդունումեմ իբրև գրաւական զգացմանց անդամոց Միաբանութեան, և իբրև գրաւական իմ կողմից՝ խոստանումեմ միշտ և յամենայնի յարգել համեստութիւնը, պատուել և քաջալերել առաքինութիւնը, խրախուսել և սիրել համեստներին իբրև իմ զաւակ և որդի։ Աղօթենք առ Աստուած, որ առաքինութիւնն, եռանդն ու համեստութիւնը թագաւորէ մեր Միաբանութեան մէջ, և այսպէս գօտեւորեալ՝ Աստուծոյ տան արժանաւոր մշակներ հանդիսանաք»։

Յաւարտ սեղանին, Նորին Վեհափառութիւն օրհնեց սեղանը, բարեմաղթութեամբք շնորհաւորեց Նոր-Տարի, յեռ որոյ միաբանք կարգաւ համբուրեցին Վեհափառ Հայրապետի Ս. Աջը և ցրուեցին ուրախ տրամադրութեամբ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ՎԱՆԻՑ.

Հայր Խմբագիր,

Հաճեցէք Ձեր ազգօգուտ թերթերէն միոյն մէջ հրատարակել հետևեալն, ընդունելով մեր ջերմ շնորհակալութիւններն և յարգանքներն. Արարք Ս. Եկեղեցւոյ վերակառուցման Գործ, Ժողովոյ Դիւանն։

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ ԱՐԱՐՔ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ Ի ՎԱՆ.

Արարք գիւղն՝ որ երբեմն Վանայ արուարձաններէն մին է եղել և Այգեստանի տակաւ ընդարձակմամբն խառնուած է քաղաքին, ունէր փոքրիկ եկեղեցի մ՚ 237 տարի առաջ շինուած՝ տձև ու նսեմ։

Ժողովուրդն՝ որ անտանելի նեղութիւններ կը կրէր ապաքէն իր եկեղեցւոյն անձկութեան պատճառաւ, վաղուց հետէ կձգնէր, կտքնէր վերակառուցանել և ընդարձակել զայն, սակայն անհնար կը թուէր նմա։ Իր այս յուսաբեկ վիճակին մէջ էր ժողովուրդն, երբ անցեալ տարի, Ապրիլ 14-ին, Նոր Կիւրակէի առաւօտ, յորում Արարք Ս. Եկեղեցւոյ տօն կը կատարուէր ըստ դարաւոր սովորութեան, քաղաքիս Առաջ. Տեղ. Գեր. Տ. Պօղոս Եպ. Մե-